

Ս. Սվանան Թ. 2 գրչագիրը մի և նոյն աղբյուրէ ծագումն ունին, ինչպէս լաւ դիտել կու տայ նաեւ հրատարակչը, և պատկերաց համեմատութիւնը մինչդեռ սկզբան և ներշնչման նոյնութիւնը կ'ապացուցանէ, շատ հետաքննական զանազանութիւններ ալ կը ներկայացնէ ի վկայութիւն իւրաքանիւրի միջնամայրի, տարբերութեամբ տարագուց և այլ կենցաղական յատկանիշներու, Հետաքրքրական է նշմարել նաեւ, որ Թ. 52 պատկերի Գիսուսի խաչակից երկու աւազակները, Թ. 107 պատկերի մէջ յետնագոյն ձեռքէ մը փոխուած են առ խաչին Գիսուսի կեցող Ս. Աստուածածնայ և Յովհաննու աւետաւանիչի, իբրեւ բարեխօսներ ծիրազիր ճատացող աւետարանիչ Եովհաննէս քահանայի (որ) համբուրէր յոռի Գիսուսի (և) խնդրէ թողութիւն իւրեան։

— Զանց կ'ընենք դիտել տալ ուրիշ մանրամասնութիւններ, ինչպէս Պատկեր Թ. 159ի, ուր Գիսուսի պայծառակերպութեան հաղորդ կը յըշխանութիւն յետնագոյն և տգէտ ստացողի մը ձեռքով՝ եղիա և Եւովք, փոխանակ Ս'ոփիստի, — Թ. 242 պատկերի սրբալու ձին, որոյ վրայ հեծած է Ս. Կոյսն Գիսուս մանուկ ի գրկին յեղիպտոս փախստեան առթիւ. — Թ. 167 պատկերի մէջ սատանաներու դերն ի դատաստանի, երբ կշիռքի Թաթերու վրայ կը կշռուին հանգուցելոյն արգարութիւնք և մեղքն, Հոս նկարիչը սխալ հասկցած և ներկայացուցած է այս դերը, որ ուրիշ նման պատկերաց ուղիղ ներկայացուցման համաձայն պիտի կայանար արդարութեան նմարը բարձրացնելու և մեղացը՝ ծանրացնելու մէջ, հմտ. պատկերք Թ. 56, 61 և 113, Այս առթիւ անցողիկ դիտենք որ մեր մանրանկարչութեան արուեստի զարգացման և ներշնչման հետազոտութեան համար լաւ օժանդակ մ'ալ կը ճանդիւրանան գաղղիական գրչագիրքը՝

Գիսուսի ենք որ այս համառոտ դիտողութիւնք բաւական պիտի ըլլան ոչ միայն պատկերներու հրատարակութեանս կարևորութիւնը, այլ միանգամայն պիտի կարենան զարթուցանել բարի նախանք մը մեր ազգասէր և արուեստասէր կրթնոսներու մէջ, սատարելու առատաձեռնութեամբ՝ որ մեր նախնեաց զեղարուեստական գանձեր կա-

րենան մի առ մի հրատարակուի և հետզհետէ կազմել ազգային պարծանաց կոթողը։

Հ. Թ. ԱՊԻՐԵ

ՐԱՐՔԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Հայաստամեայ եկեղեցի (Բամախոսութիւն). Պոստոմ 1924, էջ 58։

Հատորիկին կու լեզուն և վճռական շնորհ կը մատնանեն հեղինակին ընտիր ձիւղերը, ինչպէս «Եղեցի» և «Պատգամ» սրեններուն մէջ աւոր հրատարակած յօդուածները։

Բանաստեղծութեան նիւթն է դարուս՝ կամ լաւ ևս վերջին տարիներուն մէջ յուզուած ու ծնծուած խնդիրը, Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութիւնը։

Բաբգէն եպիսկոպոս ի սկզբան «Երանութեան» մէջ նշանակելով բանաստեղծութեան շարժառիթը՝ կ'անցնի ապա պարզելու ցայտուն և կենդանի գոյներով հայ եկեղեցւոյն դերը անցեալին մէջ իբրեւ «կազմակերպակ կրօնական... և ազգային հաստատութիւն»<sup>1</sup>. քրիստոնէութեան մուտքով՝ քաղաքակրթութեան մեծագոյն զարկը և յառաջագիծութիւնը, ապացոյց՝ Դ. Դարու կրօնական, կրթական և մարդասիրական հիաւնալի «կազմակերպութիւնները»<sup>2</sup>։

Սանդուխտէն սկսեալ մինչև վերջին օրերուն նահատակներու վտնմ ու ամբիծ հաւատքն է որ զմայլանքով կը նկարագրէ. բայց դիտել կու տայ միանգամայն որ «վերջին հալածանքներն, կենցաղի ահուկի տեղեկութիւններով վերաւորեցին մարդը հաւատքը, և շատ մը աղուոր գիծեր եղծեցին Հայ ժողովուրդին բարոյական մեծութիւններէն»<sup>3</sup>։ Այս այդ ճգնաժամն է որ բարեկարգութիւն կը պահանջէ. ու Բաբգէն եպիսկոպոս կը զօժէ սկզբնական ծրագիրը կամ տեսաւ կէտը, ըստ որում հարկ է բարեկարգութեան գործին ձեռք գարնել. «Իմ կարծիքով, կ'ըսէ նա... Հայց. Եկեղեցւոյ քաղաքակրթութիւնը պիտի քաջանայ իր հիմքերուն վրայ, իր առանդորդիւններուն վրայ»<sup>4</sup>։ Սակայն այս գուժելի հիմունքին համեմատ չեմ գտներ իր միւս կարծիքը, որ է «Ժողովուրդին դատարարականութեան համար նոր մեթոտ» — Այս մասին մեր եկեղեցին կրնայ որդեգրել Անկիւրան կամ որ նոյն է՝ Անթիքեան եպիսկոպոսական եկեղեցւոյն մեթոտը։

1. *Լ'Édouard Fleury: Les manuscrits à miniatures de la Bibliothèque de Laon*, որ մասնաւորապէս՝ (ի մասն երկրորդ էջ 45) ունինք ժիւղարու մեծագործը պատկերաց մէջ հեղու նմանութիւնք մեր հոս յիշատակած սատանայական արպարի։

1. էջ 7. — 2. էջ 11. — 3. էջ 8. — 4. էջ 48.

Հոս ամէն բան յայտնի չէ. եթէ պարզապէս մեթոտի խնդիր է՝ շատ դուրին է ծրագրել, և այն՝ հայ նկարադրին և աւանդութեանց հաւելն մատ. ինչու մուրալ օտարէն, որուն ոչ մտայնութիւն, ոչ բարձր և ոչ աւանդութիւն հայուն կը յարմարին. խնդիրը անելի աղետալի կը դառնայ՝ երբ այդ որդեգրութիւնը կատարուի հայուն տան և եկեղեցւոյ մէջ, հրաւիրելով այդ օտար դաստիարակներէն (հմուտ՝ յիշուած մեթոտին)։

Հոտ կարծեմ մեթոտը պատրուակ մը պիտի հանդիսանայ հաւատքի ու կրօնքի ուսուցման. latet anguis in herba!

Եկեղեցի մը որ «մաքուր հաւատք» ունեցեր է, ինչպէս ինքն ըսաւ, անցեալ մը փառահեղ, միթէ արդեա՞ք անապոյզ ու ապականած է որ կաթողիկէ եկեղեցիէն հատած անգամներէն ու ճիւղերէն (յիշելով Հայր Ալիշանի՝ ժամն արմատով է ժամ) մեթոտ մուրալ, և այն՝ կրօնական տեսաւ, կէտէն, քանի որ խօսքը եկեղեցւոյ մը բարեկարգութեան վրայ է։

Բարձրէն եպիսկոպոս կարևոր կէտ մ'է որ կը լուսաբանէ՝ Հայ եկեղեցւոյն ազգային նկարագիրը։ Ոչ թէ գալթակղական՝ այլ շինիչ երևոյթ մ'է այն. ունի իր սրբազան հիմքեր և Ա. «Գաւառական իշխանութիւնը»<sup>1</sup>, զոր ի սկզբանէ գործածեր է, Ս. Գրոց ազգեցութեան տակ աստուածպետական իմաստով. ասոր վրայ կ'աւելնայ նաև ուրիշ պարագայ մը. քաղաքական իշխանութեան անկումէն վերջ Հայ եկեղեցին է ազգութեան պաշտօնական ներկայացուցիչը իր գլուխով՝ օտարներուն առջև։

Բ. — «Մեծ նշանակութիւն ունեցող երևոյթ»<sup>2</sup> մը, այսինքն զրոց գիտն ու հայ մատենագրու, թեան հաստատուն հիմնարկութիւնը. զայն ստեղծող ու կազմակերպող հայ եկեղեցւոյ առաջնորդներն էին, ազգային զրի և գրականութեան հետ կրօնական տեսակէտէն ալ մղուած։

Գ. — Հուսկ վարդապետնց հերոսամարտը, ուր խաչ ու սուր, Դեռնդ ու վարդան միացուցած են կրօնքն ու ազգութիւնը. կրնայինք յիշել վաչէի մը կոլիւնէին ալ, որոնք այնքան ազգային գոյն ունին որքան կրօնական, ինչպէս յայտնի է<sup>3</sup>. որով զարմանքի ատի՞ք ըլլալէ աւելի շատ բնական և գեղեցիկ երևոյթ մ'է։

Այս ծուլումէն է հայ ռամկին մէջ գոյացած համոզումը, թէ չի իրարար հայ մը «Պատկանիլ Հոռոմ, կաթողիկէ և կամ Բողոքական եկեղեցի»

ներուն և տակաւին կոչուիլ «հայ» ։ — Բայց Բարձրէն եպիսկոպոս անմիջապէս կ'աւելցնէ. «Ասիկա, տարակոյտ չկայ, սխալ է»<sup>4</sup>. Ըստ ինքեան պէտք էր հեղինակը զանաւանդ և ոչ թէ մերժէր զայն իսկոյն. ո՞վ կրնայ ժխտել առանց տրամաբանութեան և ճշմարտութեան զէմ մեղանչելու՞ թէ հայ մը որ կ'ուրանայ Լուսաւորին ու Սահակ, վարդանն ու Շնորհալին (վերցնելով աւանդէ իր տաճարներէն, ու դատարկ և ունայն սրահներու մէջ նոր բանաձեւեր կը փոփոյ պաշտաւմունքի, որոնք չեն բխած Գրիգորի և նմանն, բուն հոգիէն, որով և ոչ Արաքսաւանդէն կամ Քրիստոսէն. այսպիսիներու համար ոչ թէ սխալ, այլ անսխալ ճշմարտութիւն է ռամկին վիճիւղը։

Մեր գիտցածով Քրիստոսի եկեղեցին մէկ է. և հայ, յոյն և այլն՝ յամթ իրենց՝ ամէն օր կը խոստովանին այդ միութիւնը և պիտի խոստովանին մինչև յաւիտեան, այս յայտնի է. սաւկայն կ'ունենան որ նոյնքան յայտնի չէ այս ճշմարտութիւնը Բարձրէն եպիսկոպոսի, որուն յղացած և զազափարած եկեղեցին մի է եղիւ մինչև 451.... և անկէ վերջ.... Դարձեալ, հայ, յոյն ևն՝ ժողովներու թուին կը կապեն եկեղեցւոյ միութիւն կամ ընդհանրականութիւնը Հայերը կը բաւականանան երեք տիեզերական ժողով ընդունելու, իսկ յոյնք քիչ մ'աւելի լայնամիտ (!) մինչև եօթն։ Եւ եթէ հարցնենք մեր հեղինակին այդ երեքի մասին՝ նոյն պատասխանն է որ կու տայ թէ 451 թուին առաջ երեք ժողով եղեր է, և եկեղեցին անկէ ասդին մի և ընդհանրական ըլլալէ զադրեր է. բայց պիտի փափաքէի առարկել հեղինակին, թէ իր դաւանած «Մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցին» կամ ցնորք կամ իրականութիւն է. և եթէ չէ կարելի ընդունիլ առաջինը՝ հարկ է որ ան իրական ըլլայ. և եթէ իրական է՝ գոյութիւն ունի. ուստի անոնք որ կը փնտենէ՝ կը գտնեն 451էն վերջն ալ. հայեցե՛ք և գտչի՛ք։

Բարձրէն եպիսկոպոս կը համարի որ հայ եկեղեցւոյն ուրոյն գոյն և նկարագիր տալով՝ զայն աւելի կը փառաբանէ. ըստ իս անոր փառքին եղծուած է այդ դրութիւնը։

«Հայաստանի եկեղեցին, կ'ըսէ նա, Լատին և Յոյն եկեղեցիներէն կը տարբերի, հաւատարիմ մնալով հաւատքի վերաբերեալ խնդիրներու մէջ կաթողիկէ, այսինքն ընդհանրական եկեղեցւոյ

կողմէն բանաձեւում որոշումներուն և կարգա-  
դրութիւններուն»<sup>1</sup>։

Բայց ի՞նչ մենք օրինակ մը միայն մէջ բե-  
րենք՝ հեղինակին ըսածը իր հիմքէն կը կոր-  
ծանք, և ստուգուի. նախ չժողովանք որ Բաբգէն  
Եպս. Ի կաթողիկէ կոչած եկեղեցին արդէն 461ին  
կը դադրի. յետոյ պահ մը նկատենք իր ըսածը՝  
թէ հաստատուն է «Հայաստանի եկեղեցին...  
հաւատարիմ մնալով հաստատի վերաբերեալ  
խնդիրներուն մէջ կարողիկէ... Եկեղեցւոյ  
կողմէն բանաձեւում որոշումներուն և այլն»։  
Բայց Հայ եկեղեցին այդ թուականէն վերջ հա-  
ւատքի վերաբերեալ ինչի՞ր մ'ընդունած է.  
«Քառակ, կ'ըսէ Կիրակոս»<sup>2</sup>, զբնաց փափկ Հռով-  
մայ»<sup>3</sup> առ մեծ կաթողիկոսն Հայոց Տէր Կոս-  
տանդին... Թէ որպէս խոստովանիք դուք զա-  
մենաստուրբ Հոգին Աստուծոյ, ի Հօրէ՞ միայն  
բղիթաւ և երեսաւ, թէ ի Հօրէ և Որդւոյ, քան-  
զի Հռովմայեցիք այսպէս խոստովանին ի Հօրէ  
և Որդւոյ»։ Եւ Կիրակոս կը յաւելու թէ «Յոյնք  
ի Հօրէ միայն ասացին»։ Իսկ հայերը քննելով  
տեսան թէ Հռովմայ եկեղեցւոյն առաջարկը  
հիմարիտ հաւատքն է և ընդունեցան։

Հետաքրքիր էի գիտնալ, թէ Կարողիկէ եկե-  
ղեցին ի՞նչ բանաձեւեց այն հաւատքի ինչի՞րը  
ըստ Բաբգէն եպիսկոպոսի. յայտնի է որ թէ Գ.  
և թէ Է. ժողովներէն վերջ, Բաբգէն եպս. կրօ-  
նական թերթերու հարկը կը շնչտէ «նպատե-  
լու համար (հայ) ժողովուրդի կրօնական դաս-  
տիարակութեան»<sup>4</sup>. Երանի՜ թէ նկատի աւնուէր  
այս կէտը, Ս. Գրոց և Ս. Հարց հմուտ և ուղ-  
ղամիտ եկեղեականներէ. եղած թերթերը «Ջա-  
նասէր» և մանաւանդ աննման «Գիտարան»ը՝  
քաջջուկ, քմածին, ճապաղ և անիմաստ քա-  
րոզներով և Ս. Գրոց մենկտութիւններով դժբախ-  
տաբար կ'եղծանէ հայուն «մաքուր հաւատքը»։  
Ըստ իս բարեկարգութեան խնդրին մէջ պէտք  
է շնչտէ «մաքուր հաւատքը» մեր Հարց և Ե.  
Դարու ոգին, դաստիարակական ամէն ծրագիր-  
ներէ առաջ, ինչ որ քիչ շատ շանացեր էր հե-  
ղինակն ալ. այն աստի՛ միայն կը դառնան ոս-  
կեղէն դարերն ու անոնց բարեկարգութիւնը, և  
ոչ թէ Անկիլիսմ մկրտականով կամ ամառանա-  
լուծութեամբ կամ կուսակիցութիւնը վերցնելով  
կամ դիակիզումով...։

Հ. ԵՂԱՍ ՓԷՅՆԿԵԱՆ

1. Էջ 28. — 2. Կիր. Ա. ի Գանձակեցւոյ Համա-  
սոս Պատմութիւն. Վենետիկ Ս. Ղ. 1865 էջ. 186. —  
3. Իննովկեսարու Գ. շուրջ 1250ին. — 4. Էջ 47.

## ԱՅԼԵՒԱՅԼԻՔ

### ԶԱՆԱԶԱՆ ՔԱՐԻՒՂՆԵՐԸ

ԵՒ ԱՆՈՆՆ ԺԱՐՏԱՐԱՐՈՒՄՍԸ

— ◁ ◁ —

Ի՞նչ են տեսակ տեսակ քարիւղները  
քիմիագիտական տեսակէտով, ինչպէս ծը-  
նունդ առած են և ինչ ձևերու տակ կը  
գտնուին անոնք երկրիս կեդէին մէջ. ո-  
րո՞նք են այն կերպերն ու միջոցները զորս  
կը գործածէ ճարտարարուեստը այդ հե-  
ղուկ վառելիքներուն աղբիւրները շահա-  
գործելու համար. վերջապէս ինչ յատ-  
կութիւններ ունին այս նիւթերը և ինչ  
գործածութիւններ։

Ահաւաստիկ ցանի մը զլիսաւոր հարցեր՝  
որոնք կը հետաքրքրեն այսօր զմեզ .  
որովհետեւ մեր հայրենիքն ունի նաւթի ոչ  
շահագործուած հանքեր, կարող՝ մատա-  
կարարելու մեզի պէտք եղածը ապագային։

Այս հանքային իւրերուն ամբողջական  
ուսումնասիրութիւնը երկար պիտի ըլլար,  
սակայն և այնպէս կարելի է գաղափար  
մը տալ ընթերցողիս՝ քարիւղներուն վրայ.  
Թէ և իմ այս յօդուածն գիտական և  
ճարտարարուեստական ուսումնասիրու-  
թիւն մը պիտի ըլլայ, բայց անհրաժեշտ  
է նախ պատմականը ընել այս իւրերուն,  
թէ ինչպէս գտնուած են անոնք և ինչ  
գործածութիւններ ունեցած են ժամանա-  
կին՝ այսօրուան հսկայ դերը խաղալու  
հասնելէ առաջ։

\*  
\* \*

«Քարի իւր »ը ճանչցուած է շատ հին  
ժամանակներէ ի վեր։ Ասկէ դարեր առաջ  
իտալիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի,  
Ճաւայի, Հիւսիսային Ամերիկայի մէջ և  
կասպից ծովու եզերքները աղբոր ժողո-  
վուրդները գիտնին թէ իրենց երկիրները  
հարուստ են քարիւղի աղբիւրներու տե-  
սակէտէ. սակայն և այնպէս այդ ժողո-  
վուրդները, մինչև 1859թ թուականը,  
դեռ շատ չէին գործածեր իրենց հանքե-